

## **ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը<sup>1</sup>**

2010 թվականի ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 755.8 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 856.8 մլրդ դրամ, որոնք համապատասխանաբար 100.6%-ով և 97.4%-ով ապահովել են տարեկան ծրագրային ցուցանիշների կատարումը:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 11.7%-ով կամ 79.4 մլրդ դրամով: Ընդ որում, 11.9%-ով (74.2 մլրդ դրամով) ավելացել են հարկային եկամուտները, պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները, 17%-ով կամ 7.3 մլրդ դրամով՝ այլ եկամուտները, միևնույն ժամանակ պաշտոնական դրամաշնորհները նվազել են 25.5%-ով կամ 2.1 մլրդ դրամով:

Պետական բյուջեի եկամուտների 92.5%-ը ձևավորվել է հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 6.7%-ը՝ այլ եկամուտների, 0.8%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին: «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետին համապատասխան պետական բյուջեում ներառվել են նաև պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 19.3 մլրդ դրամ կամ ծրագրված մուտքերի 97%-ը:

2010 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտներն ու պետական տուրքերը կազմել են 594.1 մլրդ դրամ և ապահովել տարեկան ծրագրի 99.8%-ը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 13.7%-ով կամ 71.7 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի և եկամտահարկի մուտքերի աճով:

Հարկերի և տուրքերի 50.8%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է 301.7 մլրդ դրամ և 18.7%-ով կամ 47.6 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից շուրջ 186 մլրդ

---

<sup>1</sup> Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 115.7 մլրդ դրամը՝ ներքին շրջանառությունից: Հարկ է նշել, որ մուտքերի աճ է արձանագրվել և ՀՀ սահմանին հարկումից, և ապրանքների ու ծառայությունների ներքին շրջանառությունից ստացվող մուտքերի գծով, ընդ որում, վերջիններիս աճի տեմպը գերազանցել է ներմուծումից ստացվող եկամուտների աճի տեմպը:

Պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 8.1%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով 48.1 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծված ենթակազմային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 33.5 մլրդ դրամ, որից 14.3 մլրդ դրամը՝ բենզինի և դիզելային վառելիքի, 13.7 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթակազմային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են շուրջ 14.7 մլրդ դրամ, որից 8.3 մլրդ դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի, 6.4 մլրդ դրամը՝ ոգելից խմիչքների օտարումից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 12.6%-ով կամ 5.4 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է հանրապետություն ներմուծվող ենթակազմային ապրանքների հարկումից ստացված ակցիզային հարկի մուտքերի 17.4% աճով:

2010 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների 13.1%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 77.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերը նվազել են 3.7%-ով կամ 3 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ, քանի որ տնտեսավարողները 2010 թվականի շահութահարկի կանխավճարները վճարել են՝ հիմք ընդունելով 2009 թվականի շահութահարկի ցուցանիշները:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 73.9 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 12.4%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 22.8%-ով կամ 13.7 մլրդ դրամով:

Մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են շուրջ 29.4 մլրդ դրամ՝ 16.9%-ով կամ 4.3 մլրդ դրամով գերազանցելով 2009 թվականի համապատասխան ցուցանիշը:

2010 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 20 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կազմելով տարեկան ծրագրի 96.5%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերն աճել են 5.3%-ով կամ 1 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում գործունեության առանձին տեսակներից գանձվել են շուրջ 22 մլրդ դրամ հաստատագրված վճարներ՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 3.7%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 7.7%-ով կամ 1.8 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է գործունեության որոշ տեսակների՝ հարկման ընդհանուր ռեժիմի անցնելու հանգամանքով:

2010 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 9.1 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 48.7%-ով կամ 3 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման, ինչպես նաև ամրակայված աղբյուրներից և այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու և ՀՀ ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար գանձվող վճարների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե են մուտքագրվել 12 մլրդ դրամի այլ հարկեր: Մասնավորապես՝ շուրջ 3.9 մլրդ դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին, 3.1 մլրդ դրամ՝ ճանապարհային վճարները, 2.2 մլրդ դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 221.1 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, շուրջ 1.1 մլրդ դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, շուրջ 16 մլն դրամ՝ արտոնագրային վճարները, 93 մլն դրամ՝ հարկային մարմինների կողմից ՀՀ պետական կառավարման մարմիններում և պետական հիմնարկներում կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում առաջադրված լրացուցիչ հարկային և մաքսային պարտավորությունների մարման համար պետական բյուջեից իրականացվող վճարումները և 1.6 մլրդ դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական

եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն ավելացել է 15.9%-ով կամ 1.6 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ռոյալթիի գծով մուտքերի աճով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են ավելի քան 105.3 մլրդ դրամ՝ 100.1%-ով կատարելով տարեկան ծրագիրը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 2.4%-ով կամ 2.4 մլրդ դրամով:

2010 թվականի ընթացքում արտաքին աղբյուրներից ստացվել են շուրջ 6.1 մլրդ դրամի պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ծրագրով նախատեսվածի 52.6%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով կրթության ոլորտում նախատեսված միջոցառումների ֆինանսավորման նպատակով տրամադրվող դրամաշնորհի գծով, որը նախատեսված 8 մլրդ դրամի փոխարեն կազմել է 3.4 մլրդ դրամ: 285.6 մլն դրամ է մուտքագրվել «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում Ճապոնիայի կառավարության կողմից տրամադրված ապրանքանյութական արժեքների դրամայնացումից: Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 2.3 մլրդ դրամ մուտքագրվել է պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին՝ նրանց կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորման համար, որոնց տարեկան ծրագրի կատարողականը կազմել է 75.6%:

2010 թվականի ընթացքում պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են ավելի քան 50.3 մլրդ դրամ և 27.1%-ով գերազանցել տարեկան ծրագրային ցուցանիշը: Նշված գումարից 15.4 մլրդ դրամը կազմել են պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները, որոնց ծրագիրը կատարվել է 102.9%-ով: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտներն աճել են 17%-ով կամ 7.3 մլրդ դրամով: Նման բարձր ցուցանիշներն ապահովվել են հիմնականում բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների

հաշվին, որոնք կազմել են ավելի քան 14.4 մլրդ դրամ և համապատասխանաբար 2.4 անգամ (8.5 մլրդ դրամով) և 1.4 անգամ (4.3 մլրդ դրամով) գերազանցել ծրագրային և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի փաստացի ցուցանիշները: Ծրագրի 8%-ով (1.6 մլրդ դրամով) գերազանցում է արձանագրվել նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների, 13.6%-ով (719.4 մլն դրամով)՝ իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի գծով, որոնք կազմել են համապատասխանաբար 21.7 մլրդ դրամ և 6 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 2.7 անգամ կամ շուրջ 3.9 մլրդ դրամով աճ է արձանագրվել ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց ստացված տոկոսավճարների գծով, որոնք կազմել են 6.2 մլրդ դրամ:

2010 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են 856.8 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով տարեկան ծրագրի 97.4%-ը: Մասնավորապես՝ 750.6 մլրդ դրամ են կազմել ընթացիկ ծախսերը, 106.2 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: Հաշվետու տարում 18.8 մլրդ դրամի ծախսեր են կատարվել պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին՝ կազմելով ծրագրվածի, որոնք ներառվել են պետական բյուջեի ծախսերում՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի: 2009 թվականի համեմատ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 3.9%-ով կամ 32.1 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է դրամաշնորհների, պետական պարտքի սպասարկման և ընթացիկ նորոգման ու պահպանման ծախսերի ավելացմամբ, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի նվազմամբ:

Ընթացիկ ծախսերը հաշվետու տարում կազմել են 750.6 մլրդ դրամ՝ 97.7%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 5.8%-ով կամ 41.1 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերից 73.1 մլրդ դրամ տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը, 5.3 մլրդ դրամ՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներին, որոնք կազմել են տարեկան ծրագրի համապատասխանաբար 98.1%-ը և 95.5%-ը:

Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են համապատասխանաբար 3.3%-ով և 0.4%-ով: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից օգտագործվել է 160 մլրդ դրամ, որի տարեկան ծրագիրը կատարվել է 98.2%-ով, իսկ փաստացի ցուցանիշը՝ 4.8%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: Հաշվետու տարում 30.2 մլրդ դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով տարեկան ծրագրի 88.8%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից 15.8 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, 14.4 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: Հարկ է նշել, որ և ներքին, և արտաքին պարտքի սպասարկման ծախսերում արձանագրվել են տնտեսումներ: 2009 թվականի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 86.5%-ով կամ 14 մլրդ դրամով, ընդ որում, աճ է արձանագրվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսերի գծով:

Անցած տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 17.9 մլրդ դրամի սուբսիդիաներ՝ կազմելով տարեկան ծրագրի 98.6%-ը և 6.2%-ով զիջելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Շուրջ 94.5 մլրդ դրամ են կազմել պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները, որից 92.9 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, 1.5 մլրդ դրամը՝ միջազգային կազմակերպություններին, 116.8 մլն դրամը՝ օտարերկրյա կառավարություններին: Մասնավորապես՝ համայնքների բյուջեներին տրամադրվել են 32.4 մլրդ դրամի դոտացիաներ՝ 100%-ով կատարելով տարեկան ծրագիրը և 17.9%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Դրամաշնորհների տարեկան ծրագիրն ընդհանուր առմամբ կատարվել է 97.1%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 18.6%-ով:

Հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 32.5%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, որոնք կազմել են 244 մլրդ դրամ, 99.6%-ով ապահովել տարեկան ծրագրի կատարումը և 1.6%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Մասնավորապես՝ 178.9 մլրդ դրամ են կազմել կենսաթոշակները, 65.2 մլրդ դրամ՝ նպաստները: 2009 թվականի համեմատ կենսաթոշակների գծով բյուջեի ծախսերն ավելացել են 1.7%-ով, իսկ նպաստների ծախսերը՝ 1.4%-ով:

2010 թվականի ընթացքում պետական բյուջեի միջոցներից 125.6 մլրդ դրամ տրամադրվել է այլ ծախսերին՝ 96%-ով ապահովելով տարեկան ծրագրի կատարումը: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ գրեթե չեն փոփոխվել:

Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 106.2 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 95.3%-ը: Մասնավորապես՝ 106.8 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը, որոնք 15.1%-ով կամ 19.1 մլրդ դրամով զիջել են 2009 թվականի ցուցանիշը: Հաշվետու տարում 564.5 մլն դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ նախորդ տարվա 10.7 մլրդ դրամի դիմաց:

2010 թվականին ՀՀ պետական բյուջեն կատարվել է շուրջ 101 մլրդ դրամ պակասուրդով՝ կազմելով տարեկան ծրագրով նախատեսված ցուցանիշի 78.8%-ը և 2009 թվականի նույն ժամանակահատվածի փաստացի ցուցանիշի 68.1%-ը: Պակասուրդի ֆինանսավորման համար ներքին աղբյուրներից ներգրավվել է 109.7 մլրդ դրամ, իսկ արտաքին ֆինանսավորման ցուցանիշը կազմել է -8.7 մլրդ դրամ:

Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում շուրջ 26.7 մլրդ դրամ են կազմել փոխառու միջոցներից մուտքերը: Մասնավորապես՝ 30.2 մլրդ դրամ է մուտքագրվել գանձապետական պարտատոմսերի թողարկումից՝ կազմելով տարեկան ծրագրով նախատեսվածի 100.6%-ը: Մուրհակների մարման նպատակով ծրագրով նախատեսված վճարումները կատարվել են 100%-ով: Այդ նպատակով պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 2 մլրդ դրամ: 1.5 մլրդ դրամ ուղղվել է «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի մարմանը, որը նույնպես ամբողջությամբ հատկացվել է: Անցած ժամանակահատվածում ներքին ֆինանսական ակտիվների հաշվին պակասուրդի ֆինանսավորումը կազմել է 83 մլրդ դրամ կամ նախատեսվածի 104.3%-ը: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձի բարձր ցուցանիշով: Նշված աղբյուրից պետական բյուջե է մուտքագրվել 19.9 մլրդ դրամ՝ ավելի քան 3 անգամ գերազանցելով ծրագրված ցուցանիշը: Նշված գումարից շուրջ 13.8 մլրդ դրամը ստացվել է ՌԴ վարկային միջոցներից տրամադրված վարկերի գծով, որից 12.2 մլրդ դրամը վճարվել է «Հայռուսգազարդ» ԲԲԸ-ի կողմից, 1.3 մլրդ դրամը՝ «Ագարակի ՊՄԿ» կողմից և 232.7 մլն դրամը՝ «ՓՄՁ

ներդրումներ>> ՌԻՎԿ-ի կողմից: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 6.3 մլրդ դրամի վարկեր: Նշված գումարից 5.8 մլրդ դրամը տրամադրվել է ՌԴ կողմից 2009 թվականին Հայաստանի Հանրապետությանը տրամադրված պետական վարկի միջոցներից, որից 5 մլրդ դրամը հատկացվել է տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի առաջին բաղադրիչի ֆինանսավորման նպատակով, 417 մլն դրամը՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից հիմնադրված վարկային կազմակերպությանը, 414.2 մլն դրամը՝ «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓՄՁ-ին: 175 մլն դրամ ուղղվել է Գերմանահայկական հիմնադրամի կողմից իրականացվող մասնավոր փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման վարկային ծրագրին՝ որպես կառավարության համաֆինանսավորում: Ավելի քան 168.2 մլն դրամ արտոնյալ պայմաններով տրամադրվել է բռնադատված քաղաքացիներին՝ անհատական բնակարանային շինարարության վարկավորման նպատակով: 2010 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին պետական բյուջեի ազատ միջոցներից օգտագործվել է 69.4 մլրդ դրամ՝ նախատեսված 80 մլրդ դրամի փոխարեն:

Անցած ժամանակահատվածում պետական բյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորումը կազմել է -8.7 մլրդ դրամ՝ տարեկան ծրագրով նախատեսված 22 մլրդ դրամի դիմաց: Մասնավորապես՝ 25.9 մլրդ դրամ է կազմել փոխառու միջոցների հաշվին ֆինանսավորումը, -34.6 մլրդ դրամ՝ ֆինանսական ակտիվները:

Հաշվետու ժամանակահատվածում Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից տրամադրվել են շուրջ 35.6 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ նախատեսված 65.2 մլրդ դրամի դիմաց: Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է 9.7 մլրդ դրամ, որից 6.8 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 293.2 մլն դրամը՝ ԳԶՄՀ, 88.7 մլն դրամը՝ ՎԶԵԲ, 128.8 մլն դրամը՝ ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի նկատմամբ ունեցած պարտքի մարմանը, 1.1 մլրդ դրամ է տրամադրվել Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 667.6 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 50.4 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի



ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը և 571.4 մլն դրամ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության նկատմամբ պարտավորությունների մարմանը:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 33.2 մլրդ դրամ միջպետական վարկ է տրամադրվել ԼՂՀ-ին: Վրաստանի կողմից միջպետական վարկի գծով կատարվել է 93.6 մլն դրամի վճարում, որից 44.8 մլն դրամը նախորդ տարվա պարտավորությունն է, և Վրաստանի կողմից փոխանցվել է 2009 թվականի դեկտեմբերին, սակայն գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է 2010 թվականի հունվար ամսին: Նույն կերպ 2010 թվականի պարտավորության մի մասը՝ 49.1 մլն դրամի չափով, պետական բյուջե է մուտքագրվել 2011 թվականի հունվարին: Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերմանն ուղղվել է 753.8 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում 755.8 մլն դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված արտաբյուջետային դրամաշնորհային միջոցների մնացորդը: